ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԱՊՁԲ-20/4

ք. Գյումրի «25» փետրվար 2020թ.

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս.Հովհաննիսյանի, որը գործում է «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հերմո ֆարմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Հլոյան, որը գործում «Հերմո ֆարմ» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 145 850 (երկու միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[19] : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

---

[19] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[22]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է[26]:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բեռլին պոլիկլինիկա» ՍՊԸ	«Հերմո Ֆարմ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 25	ք. Գյումրի, Հաղթանակի 42 ա,բն.1
Արդշինբանկի Գյումրի մ/ճ	<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
247260002750	Հ/Հ 2050122054441001
05503375	ՀՎՀՀ 05522575
Սարգիս Հովհաննիսյան	Տնօրեն՝ Հ.Հլոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[26] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված
«30» հունվար 2020 թ. կնքված
«ՄԱ-ԱՊՁԲ-20/4» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1.	24931500	Ռենտգեն նկարների երևակիչներ 15լ	15լ	հատ	6900	6	41,4
2.	24931600	Ռենտգեն նկարների կայունացուցիչներ	կայունացուցիչներ	հատ	6900	4	27,6
3.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 30x40սմ	30x40սմ	հատ	360	1200	432
4.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 24x30սմ	24x30սմ	հատ	240	300	72
5.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 18x24սմ	18x24սմ	հատ	130	500	65
6.	32351231	Ռենտգեն ժապավեն կապույտ 13x18սմ	13x18սմ	հատ	130	200	26
7.	32351230	Ռենտգեն ժապավեն 30,5x40,5	30,5x40,5	հատ	130	400	52
8.	31651200	Է.Ս.Գ. Ժապավեն 60Х30	60Х30	հատ	480	150	72
9.	33141143	Սկարիֆիկատոր մետաղական միանգամյա օգտագործման	մետաղական	հատ	8	5000	40
10.	33141110	Վիրակապ 7Х14 ոչ ստերիլ	7Х14 ոչ ստերիլ	հատ	140	300	42
11.	33141112	Կպչուն սպեղանի կտորից 5Х500 սմ	5Х500 սմ	հատ	480	50	24
12.	33141114	Թանզիվ բժշկական	Թանզիվ	մետր	120	100	12
13.	33141115	Բամբակ բժշկական 100գր	100գր	տուփ	230	300	69
14.	33141142	Ներարկիչ 10մլ	10մլ	հատ	26	200	5,2
15.	33141142	Ներարկիչ 3մլ	3մլ	հատ	18	200	3,6
16.	33141142	Ներարկիչ 5մլ	5մլ	հատ	19	300	5,7
17.	33141142	Ներարկիչ 1մլ	1մլ	հատ	20	200	4
18.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /լատեքսային, առանց տալկի, M չափի/	լատեքսային, առանց տալկի, M չափի/	հատ	21	1500	31,5
19.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /լատեքսային, առանց տալկի, L չափի/	/լատեքսային, առանց տալկի, L չափի/	հատ	24	1000	24
20.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /վինիլային/ M	/վինիլային/ M	հատ	24	2000	48
21.	33141160	Սոնոգել 250մլ	250մլ	հատ	350	100	35
22.	33161220	Փայտե շպատել N100 ոչ ստերիլ	ոչ ստերիլ	հատ	8	6000	48

23.	33141211	Առարկայական ապակի 25.4x76.2մմ	25.4x76.2մմ	հատ	15	700	10,5
24.	33191000	Ծածկապակի 12x25մմ	12x25մմ	հատ	15	500	7,5
25.	33141179	Ախտորոշման բժշկական հավաքածուներ /ՓԱՓ քսուկի՝ փայտե շպատել, խոզանակ, առարկայական ապակի/	ՓԱՓ քսուկի՝ փայտե շպատել, խոզանակ, առարկայա կան ապակի/	հատ	300	350	105
26.	33211120	Արյան մեջ գլյուկոզայի որոշման թեսթ /Accu-Chek Performa գյուկոմետրի/	/Accu-Chek Performa գյուկոմետր ի/	հատ	140	500	70
27.	33141131	Արյուն վերցնելու ժապավեն ամրակներով (ժգուտ) /կտորից/	ամրակներո վ (ժգուտ) /կտորից/	հատ	780	4	3,12
28.	33141211	Կաթոցիչ պլաստմասե՝ Է.Ն.Ա.-ի	Է.Ն.Ա.-ի	հատ	250	50	12,5
29.	33141100	Ծայրակալ պլաստմասե 10մկլ-100մկլ	10մկլ-100մկլ	հատ	7	1500	10,5
30.	33141100	Ծայրակալ պլաստմասե 100մկլ-1000մկլ	100մկլ-1000մկլ	հատ	7	1490	10,43
31.	33191310	Փորձանոթ /կոնաձև, ցենտրիֆուգի համար, պլաստմասե/ 10մկլ	կոնաձև, ցենտրիֆու գի համար, պլաստմասե / 10մկլ	հատ	150	60	9
32.	33191310	Փորձանոթ ապակյա /կոնաձև, ցենտրիֆուգի համար/	կոնաձև, ցենտրիֆու գի համար/	հատ	200	100	20
33.	33191310	Փորձանոթ ապակյա /Stat-Fax անալիզատորի, բորոսիլիկատ/	Stat-Fax անալիզատո րի, բորոսիլիկա ատ/	հատ	80	400	32
34.	33191310	Փորձանոթ ապակյա /10x15/	10x15/	հատ	160	200	32
35.	33711190	Փայտիկներ /երկու կողմից բամբակյա ծայրով/	երկու կողմից բամբակյա ծայրով/	հատ	4	2000	8
36.	38411200	Ջերմաչափ թևատակի էլեկտրոնային	էլեկտրոնայ ին	հատ	820	20	16,4
37.	38431700	Պլաստմասե անոթ՝ հեղուկների ծավալը ստույգ որոշելու համար /պիպետկա/	պիպետկա	հատ	100	60	6
38.	42921180	Էլեկտրոնային կշեռք	էլեկտրոնայ ին	հատ	7800	3	23,4
39.	39224460	Պլաստմասե սրվակ 2մգ (Էպենդորֆ)	2մգ (Էպենդորֆ	հատ	6	1000	6
40.	30192330	Ժապավեն անալիզատորի /Stat - Fax 4500/	Stat - Fax 4500/	հատ	2000	12	24

41.	33211110	Մեզի մեջ գլյուկոզայի չափման սարք՝ 8 պարամետր	գլյուկոզայի չափման սարք՝ 8 պարամետր	հատ	8500	10	85
42.	33141211	Ստրիպներ՝ թաքնված արյան վերաբերյալ	Ստրիպներ	հատ	1300	100	130
43.	44421720	Այրման տուփեր	թղթե	հատ	300	150	45
44.	33141129	Դիմակ	Դիմակ	հատ	130	100	13
45.	38411400	Խոնավաչափ	Խոնավաչափ	հատ	6500	1	6,5
46.	30192320	Սոնոգրաֆիկ ժապավեն տպիչի	ստանդարտ	հատ	6500	50	325

Ապրանքի մատակարարման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
*** Ապրանքի հանձնման պահին պետք է առկա լինի ապրանքի պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-ը:***
*****Մատակարարը ապրանքը մատակարարելու է ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեով՝ «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ:***

ԳՆՈՐԴ

«Բեռլին պոլիկլինիկա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Հաղթանակի 25
Արդշինբանկի Գյումրի մ/ճ
247260002750
05508375
Սարգիս Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Հերմո Ֆարմ» ՍՊԸ
ք. Գյումրի, Հաղթանակի 42 ա,բն.1
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122054441001
ՀՎՀՀ 05522575
Տնօրեն՝ Հ.Հյոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավ
«25» փետրվար 2020թ. կա
«ՄԱ-ԱՊՁԲ-20/4» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	24931500	Ռենտգեն նկարների երևակիչներ 15լ			10350	13800	17250	20700	24150	27600	31050	34500	37950	41400	41400
2.	24931600	Ռենտգեն նկարների կայունացուցիչներ			6900	9200	11500	13800	16100	18400	20700	23000	25300	27600	27600
3.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 30x40սմ			108000	144000	180000	216000	252000	288000	324000	360000	396000	432000	432000
4.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 24x30սմ			18000	24000	30000	36000	42000	48000	54000	60000	66000	72000	72000
5.	32351230	Ռենտգեն ժապավեն կապույտ 18x24սմ			16250	21667	27083	32500	37917	43333	48750	54166,667	59583,33	65000	65000
6.	32351231	Ռենտգեն ժապավեն կապույտ 13x18սմ			6500	8666,7	10833	13000	15167	17333	19500	21666,667	23833,33	26000	26000
7.	32351230	Ռենտգեն ժապավեն 30,5x40,5			13000	17333	21667	26000	30333	34667	39000	43333,333	47666,67	52000	52000
8.	31651200	Է.Ս.Գ. Ժապավեն 60X30			18000	24000	30000	36000	42000	48000	54000	60000	66000	72000	72000
9.	33141143	Սկարիֆիկատոր մետաղական միանգամյա օգտագործման			10000	13333	16667	20000	23333	26667	30000	33333,333	36666,67	40000	40000
10.	33141110	Վիրակապ 7X14 ոչ			10500	14000	17500	21000	24500	28000	31500	35000	38500	42000	42000

		ստերիլ													
11.	33141112	Կպչուն սպեղանի կտորից 5X500 սմ			6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
12.	33141114	Թանզիվ բժշկական			3000	4000	5000	6000	7000	8000	9000	10000	11000	12000	12000
13.	33141115	Բամբակ բժշկական 100գր			17250	23000	28750	34500	40250	46000	51750	57500	63250	69000	69000
14.	33141142	Ներարկիչ 10մլ			1300	1733,3	2166,7	2600	3033,3	3466,7	3900	4333,3333	4766,667	5200	5200
15.	33141142	Ներարկիչ 3մլ			900	1200	1500	1800	2100	2400	2700	3000	3300	3600	3600
16.	33141142	Ներարկիչ 5մլ			1425	1900	2375	2850	3325	3800	4275	4750	5225	5700	5700
17.	33141142	Ներարկիչ 1մլ			1000	1333,3	1666,7	2000	2333,3	2666,7	3000	3333,3333	3666,667	4000	4000
18.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /լատեքսային, առանց տալկի, M չափի/			7875	10500	13125	15750	18375	21000	23625	26250	28875	31500	31500
19.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /լատեքսային, առանց տալկի, L չափի/			6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
20.	33141159	Ձեռնոցներ ոչ ստերիլ /վինիլային/ M			12000	16000	20000	24000	28000	32000	36000	40000	44000	48000	48000
21.	33141160	Սոնոգել 250մլ			8750	11667	14583	17500	20417	23333	26250	29166,667	32083,33	35000	35000
22.	33161220	Փայտե շպատել N100 ոչ ստերիլ			12000	16000	20000	24000	28000	32000	36000	40000	44000	48000	48000
23.	33141211	Առարկայական ապակի 25.4x76.2մմ			2625	3500	4375	5250	6125	7000	7875	8750	9625	10500	10500
24.	33191000	Ծածկապակի 12x25մմ			1875	2500	3125	3750	4375	5000	5625	6250	6875	7500	7500
25.	33141179	Ախտորոշման բժշկական հավաքածուներ /ՓԱՓ քսուկի՝ փայտե շպատել, խոզանակ, առարկայական ապակի/			26250	35000	43750	52500	61250	70000	78750	87500	96250	105000	105000
26.	33211120	Արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ /Accu-Chek Performa			17500	23333	29167	35000	40833	46667	52500	58333,333	64166,67	70000	70000

		գյուկոմետրի/													
27.	33141131	Արյուն վերցնելու ժապավեն ամրակներով (ժգուտ) /կտորից/			780	1040	1300	1560	1820	2080	2340	2600	2860	3120	3120
28.	33141211	Կաթոցիչ պլաստմասե՝ Է.Ն.Ա.-ի			3125	4166,7	5208,3	6250	7291,7	8333,3	9375	10416,667	11458,33	12500	12500
29.	33141100	Ծայրակալ պլաստմասե 10մկլ-100մկլ			2625	3500	4375	5250	6125	7000	7875	8750	9625	10500	10500
30.	33141100	Ծայրակալ պլաստմասե 100մկլ-1000մկլ			2607,5	3476,7	4345,8	5215	6084,2	6953,3	7822,5	8691,6667	9560,833	10430	10430
31.	33191310	Փորձանոթ /կոնաձև, ցենտրիֆուգի համար, պլաստմասե/ 10մկլ			2250	3000	3750	4500	5250	6000	6750	7500	8250	9000	9000
32.	33191310	Փորձանոթ ապակյա /կոնաձև, ցենտրիֆուգի համար/			5000	6666,7	8333,3	10000	11667	13333	15000	16666,667	18333,33	20000	20000
33.	33191310	Փորձանոթ ապակյա /Stat-Fax անալիզատորի, բորոսիլիկատ/			8000	10667	13333	16000	18667	21333	24000	26666,667	29333,33	32000	32000
34.	33191310	Փորձանոթ ապակյա /10x15/			8000	10667	13333	16000	18667	21333	24000	26666,667	29333,33	32000	32000
35.	33711190	Փայտիկներ /երկու կողմից բամբակյա ծայրով/			2000	2666,7	3333,3	4000	4666,7	5333,3	6000	6666,6667	7333,333	8000	8000
36.	38411200	Ջերմաչափ թևատակի էլեկտրոնային			4100	5466,7	6833,3	8200	9566,7	10933	12300	13666,667	15033,33	16400	16400
37.	38431700	Պլաստմասե անոթ՝ հեղուկների ծավալը ստույգ որոշելու համար /պիպետկա/			1500	2000	2500	3000	3500	4000	4500	5000	5500	6000	6000
38.	42921180	Էլեկտրոնային կշեռք			5850	7800	9750	11700	13650	15600	17550	19500	21450	23400	23400
39.	39224460	Պլաստմասե սրվակ 2մգ (Էպենդորֆ)			1500	2000	2500	3000	3500	4000	4500	5000	5500	6000	6000
40.	30192330	Ժապավեն անալիզատորի /Stat - Fax 4500/			6000	8000	10000	12000	14000	16000	18000	20000	22000	24000	24000
41.	33211110	Մեզի մեջ գլյուկոզայի			21250	28333	35417	42500	49583	56667	63750	70833,333	77916,67	85000	85000

		չափման սարք՝ 8 պարամետր													
42.	33141211	Ստրիպներ՝ թաքնված արյան վերաբերյալ			32500	43333	54167	65000	75833	86667	97500	108333,33	119166,7	130000	130000
43.	44421720	Այրման տուփեր			11250	15000	18750	22500	26250	30000	33750	37500	41250	45000	45000
44.	33141129	Դիմակ			3250	4333,3	5416,7	6500	7583,3	8666,7	9750	10833,333	11916,67	13000	13000
45.	38411400	Խոնավաչափ			1625	2166,7	2708,3	3250	3791,7	4333,3	4875	5416,6667	5958,333	6500	6500
46.	30192320	Սոնոգրաֆիկ ժապավեն տպիչի			81250	108333	135417	162500	189583	216667	243750	270833,33	297916,7	325000	325000

ԳՆՈՐԴ

«Բեռլին պոլիկլինիկա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Հաղթանակի 25
Արոշինբանկի Գյումրի մ/ճ
247260002750
05503375
Սարգիս Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Հերմո Ֆարմ» ՍՊԸ
ք. Գյումրի, Հաղթանակի 42 ա,բն.1
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122054441001
ՀՎՀՀ 05522575
Տնօրեն՝ Հ.Հլոյան

/ստորագրություն/
Կ.Տ